«ԳՐԱՌԱՋՔՆԵՐԸ» ՀԱՅ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԱՏԵՆԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Ա. Գ. ԴՈԼՈՒԽԱՆՅԱՆ

Միջնադարյան ձեռագրերում, հատկապես ժողովածուներում հաճախ ենք հանդիպում յուրատեսակ ստեղծագործություններ, որոնք կոչվում են գրառաջք: Դրանք փոքրիկ գեղարվեստական միավորներ են և երևան են գալիս փնջերով։ Տարբեր ձեռագրերում այդ փնջերը տարբեր միավորներից են բաղկացած, չնայած երբեմն կրկնում են միմյանց կամ մատնում իրենց մի ընդհանուր ակունքից սերած լինելը։

Գրառաջքները նամակների, թղթերի, կոնդակների, հրովարտակների և նման այլ գրագրությունների պերճապաճույճ նախաբան-սկսվածքներ են. ըստ որում, դրանք քաղված են ոչ թե կոնկրետ ստեղծագործություններից, այլ ստեղծված են նման գործերին նախորդելու համար։ Այդ պատճառով էլ որոշ ձեռագրերում գրառաջքները կոչվում են «օրինակք», «ձևք», «գովասանութիւնք» կամ «նախերգանք»։ Իշխում է, սակայն, «գրառաջքը», որն անհամեմատ ավելի է համապատասխանում քննվող միավորների էությանը։ Ինքնին հասկանալի է, որ գրառաջքային փնջեր ստեղծող հեղինակները, դրանք ընդօրինակող ու մշակող գրիչները, պատվիրատու կամ կազմող գրասերները օգտվել են ոչ միայն հին ու նոր գրառաջքներից, այլև այդպիսի սկսվածք ունեցող պատրաստի գործերից, բայց կտրելով նրանցից և անորոշ ձևի մեջ դնելով այդ հատվածները։ Այսուհանդերձ, գրառաջքների մեջ կոնկրետ նամակի, կոնդակի և նման այլ գրվածքի փաստաթղթային արժեք որոնելը անիմաստ կլիներ։

Որպեսզի գրառաջքների օգտագործման ժամանակ շփոթություն չառաջանա, դրանց ստեղծողները հասցեատերերի անունների փոխարեն օգտագործել են պայմանական դարձվածքներ («այս անուն», «ով որ է» և այլն)։ Օգտվողը պարտավոր է այդ պայմանական դարձվածքների տեղը դնել համապատասխան անուն։ Երբեմն դրառաջքներում հանդիպում են հատուկ անուններ, կոնկրետ թվացող դեպքեր, որոնք բոլորն էլ, սակայն, պայմանական նշանակություն ունեն։

Գրառաջքների ծավալը փոքր է՝ մի քանի տողից—մի քանի էջ։ Վերջիններս փաստորեն շեղումներ են՝ գերաճած առանձին ու ամբողջական գովքերի։

Որպես կանոն գրառաջքները դրվում են մի ընդհանուր խորագրի տակ («Գրառաջք», «Առաջք թղթոց» և այլն), ապա ենթախորագրերով միմյանց են հաջորդում համապատասխան անձանց (կաթողիկոսի, թագավորի, ոսկերչի, գրոց աշակերտի, կտրիճի և այլն) ուղղված դրվատանք-ներբողանքները։

Գրառաջքները դեռևս լայն քննության առարկա չեն դարձել։ Նրանց մասին կցկտուր նշումներ կան լոկ ձեռագրացուցակներում կամ առանձին ձեռագրերի նկարագրությունների մեջ։ Այսպես, օրինակ, Մաշտոցի անվան Մատենադարանի ձեռագրերի երկհատոր ցուցակում «Նամականի» խորագրի տակ նշված են այն ձեռագրերի համարները, որոնց մեջ կան «գրառաջք, նախերգանք.

սրինակք նամակաց և գրութեանց»[1]։ Նկատենք, որ ձեռագրացուցակներում էլ միշտ չէ, որ նկարագրված կամ նշված են գրառաջքները։ Առհասարակ բնավ ուսումնասիրված չլինելու պատճառով է, որ հայոց լեզվի ու գրականագիտական բառարաններում բացակայում է գրառաջք բառը[2]։

Մեզ հայտնի հնագույն գրառաջքները երևան են գալիս XIII դ. ձեռագրերում։ Անհավանական չէ, որ այդպիսիք եղած լինեին նաև նախորդ դարերում։ Այդ մասին անուղղակիորեն վկայում են Ներսես Շնորհալու «Թուղթ ընդհանրականը»[3], Գրիգոր Մագիստրոսի թղթերն ու նամակները՝ գրված XI դ.[4], «Գիրք թղթոց» ժողովածուն[5] և, վերջապես, առանձին պատմիչների երկերում հիշատակված գրագրությունները։ Նրանց նախնական արմատներն ավելի խորն են։

Անվանի ուրարտագետ Մելիքիշվիլին քննելով ուրարտական արձանագրությունները, հանգել է հետևյալ եզրակացության. «В урартских победных надписях можно различить начало, центральную часть и конец надписи»[6] Կանգ առնելով սկզբի մասի վրա, նա գտնում է, որ այն նվիրված է աստծուն և ունի դրվատական բովանդակություն[7]։ Այդ դրվատական-ներբողական ոգին է, ահա, որ համապատասխան փոփոխություններով հանդերձ պահպանվում է նաև հետագայում։ Նախաքրիստոնեական ժամանակների փաստերից կարելի է հիշել Մովսես Խորենացու Պատմության մեջ պահպանված Վաղարշակ թագավորի թղթի սկիզբը՝ ուղղված պարսից թագավոր Արշակ Մեծին. «Արշակ թագաւոր երկրի ու ծովու, որոյ անձն և պատկեր-որպէս և է իսկ մեր աստուածոց, իսկ բախտ և պատահումն ի վեր քան զամենայն թագաւորաց, և մտաց լայնութիւն՝ որչափ երկնի ի վերայ երկրի. Վաղարշակ կրտսեր եղբայր քո և նիզակակից, որ ի քէն կարգեալ արքայ Հայոց. Ողջ լեր ամենայն յաղթութեամբ»[8]։

Ինչպես տեսնում ենք, թե՛ ուրարտական և թե՛ հետուրարտական նախամեսրոպյան այս գրությունների նախադրություններում իշխում է փառաբանական-գովասանական մի հատուկ ձև, որի արձագանքները հասնում են մեզ հետաքրքրող գրառաջքներին։ Եվ դա բնական է, որովհետև գրառաջքը, որպես պատշաճ եղանակով խոսքն սկսելու ձև, չէր կարող ծնվել լոկ X—XIV դդ.։

Գրառաջքները, որպես կանոն, ներկայանում են առանց հեղինակների։ Իրականում, սակայն, դրանք բոլորն էլ ճանաչված հեղինակների գրչի արգասիք են։ Բարեբախտաբար դրանցից մի քանիսի մասին որոշ տվյալներ կան։ Մեզ հայտնի առաջին հեղինակը, որի անունով գրառաջքներ են հասել, XIII դ. բանաստեղծ Հովհաննես Երզնկացին է։ Մաշտոցի անվան Մատենադարանի № 652 ձեռագրում պահպանվել են նրա գրառաջքներից երկուսը՝

---

1 «Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի». Ա. Երևան, 1965, էջ 1402, Բ, 1970. էջ 1195։

2 Գրառաջք բարդ բառ է՝ բաղկացած գիր (գրվածք, գրություն) և առաջ (առաջք) բառերից, ուր նկատի է առնված տվյալ թղթի, գրվածքի, գրության առաջի (սկզբի) հատուկ մասը՝ «առաջքը», «նախերգանքը»։

3 Ն. Շնորհալի, Թուղթ ընդհանրական, էջմիածին, 1865։

4 «Գրիգոր Մագիստրոսի թղթերը». Ալեքսանդրապոլ, 1910։

5 «Գիրք թղթոց», Թիֆլիս, 1901։

6 Г. А. Меликишвили, Урартские клинообразные надписи. М., 1960. стр. 94.

7 Նույն տեղում, էջ 93—102։

8 «Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն հայոց», Տփղիս, 1913, էջ 29։

«Ազդմունք նորին Յոհաննու Ըզընկեցոյ առացեալ է»[9] ընդհանուր խորագրով, որին հաջորդում են այդ գրառաջքները.

ա) «Գովասանութիւն եպիսկոպոսաց և կաթողիկոսաց, յորժամ գրէն թուղա ղրկելոյ՝ յառաջ զայս գրեն, ապա զծանուց [մունսն][10],

բ) «Գովասանութիւն եպիսկոպոսաց, իշխանաց և աշխարհականաց»[11]։

Այստեղ, ինչպես տեսնում ենք, «գրառաջք» բառը չկա, սակայն մեջբերված խորագրերը ցույց են տալիս դրանց գրառաջքային բնույթը, ուր որոշակի ասված է. «յառաջ զայս գրեն» («գովասանութիւնք»)։

Ինչպիսի ամբողջություն է կազմել Հովհաննես Երզնկացու գրառաջքների շարքը, դժվարանում ենք ասել, սակայն հիմքեր կան մտածելու, որ մեզ հայտնի այս օրինակները փշրանքներ են նրա ստեղծած գրառաջքներից։ Այս առիթով ուշագրավ է հետևյալ փաստը։ Բանասերներ Ա. Սրապյանը և Է. Բաղդասարյանը վերջերս քննության առարկա դարձրին Հ. Երզնկացու մի թուղթը և առընթեր տպագրեցին մի հատված № 3439 ձեռագրից[12], ուր առկա է «այս անուն» բանաձևը. «Ծանուցանեմ քեզ զաստուածասեր հոգի այս անուն խոհեմամիտ և առաքինասեր վարդապետիդ...»[13]։ Հարց է առաջանում՝ արդյոք այստեղ գործ չունե՞նք նույն հեղինակի մի այլ գրառաջքի օգտագործման փաստի հետ. չէ՞ որ նամակում հասցեատերը չէր կարող անհայտ լինել և նշվել «այս անուն» բանաձևով։

Գրառաջքային շարքերի հեղինակներից է, մեր կարծիքով, նաև XVI դ. բանաստեղծ Հակոբ Թոխատեցին։ Դրա վկայությունն է այժմ Լենինգրադի Սալտիկով-Շչեդրինի անվան գրադարանում պահվող № 13 ձեռագիրը (XVIII դ.)։ Այստեղ գրառաջքներից մեկի դիմաց նշված է. «Տէր Յակոբին մինչ ի հոս գրեցի», իսկ մի այլ նշում ասում է, թե «Զգովասանքս արժանաւորաց գրեա և զԲաթուկենց տէր Յակոբն յիշեա»։ Հասկանալի է, որ XVIII դ. գրչի ձեռքի տակ եղել են նաև Հակոբ Թոխատեցու գրառաջքները։

Ուշագրավ է XVIII դ. գործիչ ու բանաստեղծ Պաղտասար Դպրի 1752 թ. հրատարակված «Բարեագիրքը»։ Այստեղ նամակների ամբողջական ձևեր են՝ գրառաջքներով հանդերձ։ Առանձին կարևորություն ունի «Առ ազդեցութիւն ինչ առ ի կիր ածող սիրելիսդ զօրինակս բարեագրացս»[14] խորագրով բացատրությունը, ուր հեղինակը նկատել է տալիս, որ դրանք միայն իր ստեղծած ձևերը չեն, այլ՝ «առեալ զոմանս ի նախնեացն շարադրութեանց և զոմանն որքան երբեր կարն ամենակար՝ ի կարն մեր տկար»։ Այս «ազդեցության» (իմա՛ ազգի) վերջին մասը ևս գրառաջքների մի փոքրիկ շարք է։

Գրառաջքների ամենակարևոր առանձնահատկությունն այն է, որ դրանք հասցեագրված են տարբեր դիրք ու դեր ունեցող անձանց, ուստի և յուրովի բացահայտում են նրանց կյանքի, կենցաղի ու միջավայրի մանրամասները։

---

9 Ձեռ. № 652, թ. 75բ։ Այս փաստը նկատել է Ա. Սրապյանը. տե՛ս նրա «Հովհաննես Երզնկացի», Երևան, 1958, էջ 288, 291։

10 Նույն տեղում, թ. 75բ—76բ։

11 Նույն տեղում, թ. 76բ—77բ։

12 «Բանբեր Մատենադարանի», № 10, Երևան, 1971, էջ 303։

13 Նույն տեղում։ Այդ թղթի վերջին էջի փոխաբերական համեմատությունները մեզ մտածել են տալիս նրա և № 7703 ձեռագրի 106ա—109բ թերթում գտնվող այն խրատականի հեղինակների առնչության մասին, որի նպատակն է օգնել գրառաջքներ ստեղծելու գործին։

14 Պ ա ղ տ ա ս ա ր Դ պ ի ր, Օրինակք Բարեագրաց, Կ. Պոլիս, 1752, էջ 98—106։

Որպես ընդհանուր օրենք, գրառաջքները նկատի ունեն թագավորներին, իշխաններին, տանուտերերին, զորականներին, կաթողիկոսներին, եպիսկոպոսներին, վարդապետներին, հոգևորականության ստորին խավերին, ինչպես նաև արհեստավորներին, երևելի տիկնանց, առանձին անհատների, անգամ նորապսակներին, ըմբիշներին և այլոց։ Թեև մեծարանքի ընդհանուր գնահատանքներով և դրվատանքի սրտագրավ զեղումներով, բայց և այնպես տվյալ անձնավորությանը պատշաճող բնութագրականներով են հորինված գրառաջքները։ Ընդհանուր գովքն ու դրվատանքը պիտի համապատասխանի տվյալ անհատի դիրքին ու բնավորությանը։ Այս առումով ուշագրավ է Պաղտասար Դպրի խրատականը՝ նամակաձևերից օգտվողներին. «... Որ ոք և իցէ, որ կամիցի բարեագիր գրել միում ումեք, հարկավոր է նմա ճանաչել զկացութիւն այնր անձին և այնպէս գրել՝ որպէս նմա վայել է։ Զի եթէ այնպիսի բարձր գովութիւն տացէ ումեք, որ չիցէ վայելուչ նմա բնաւ, յոյժ անպատկան լինի դրեալն։ Վասն այսորիկ պարտ է նըկատել, թէ որպիսի ոք է անձն այն և այնպէս ըստ պատշաճին գրել զբանն։ Այսինքն՝ եթէ իմաստուն կարդացող է, եթէ ճոռոմ ատենաբան քարոզիչ է, եթէ վանաշէն և մարդաշահ է, եթէ հեզաբարոյ և խոնարհ է... եթէ համբաւունակ արհեստագործ է, եթէ համեղաձայն քաղցր երաժիշտ է...»[15] և այլն։

Ձեռագրերում երբեմն հանդիպում ենք նաև գեղարվեստական հարդարանքին վերաբերող խորհուրդների։ Հետաքրքրական է, օրինակ, № 7703 ձեռագրի անանուն ուսուցողականը. «Արդ եթէ կամիս հասու լինել վարդապետական շնորհաց և գովութեան ամենայն իրաց և գովասանական ներբողական բանից, կալ զքեզ օրինակ զչորս տարերքս, զերկինս և զերկիր, զծով և զցամաք և զամենայն որ ի նոսա։ Նախ զերկինս և ապա զհողն, յետո դքարն և ապա ըզփայտն... Երկնի օրինակ՝ երկիրս և աստուծոյ օրինակ՝ մարդիկք բարեգործք, բարեպաշտ թագաւորք և աստուածասէր իշխանք, լերանց օրինակ՝ նահապետք և մարգարէք, բլրոց՝ վարդապետք, ազբերաց՝ քահանայք, հովտաց, ծառոց և պտղոց՝ արդարագործութիւնք մարդկան ազգաց, գարնանայնոյ և ամարայնոյ օրինակ՝ տղայութիւն, աշնանայնոյ և ձմերայնոյ՝ ծերութիւն և մահ»[16]։

Ասվածից ինքնին հասկանալի է, որ այս եղանակով դրվատվելու էին ոչ միայն գործիչներն ու պաշտոնյաները, այլև նրանց հետ համեմատվող ուժերն ու երևույթները, կյանքը, իրական աշխարհը։ Այստեղ անհնար է բերել գրառաջքներում հանդիպող բոլոր հասցեատերերի վերաբերյալ օրինակներ, ուստի կբավարարվենք առանձին նմուշներով։

Ահա մի ամփոփ գրառաջք, ուր նկատի է առնված ժամանակի գրագետներից փիլիսոփան. «Աստուածային ձեռօքն օծեալ և նորին իմաստութեամբ լցեալ երգարան ամենահանճար հոգոյն, քաղցրաբարբառ և բարէհամբաւ, քաղցր յիշումն մտաց իմոց սիրելի եղբայր և տէր այս [անուն], ով որ է»[17]։ Այս նախաբանին է, որ պետք է հաջորդեր նրանից օգտվողի բուն ասելիքը։ Նամակ կամ գրություն գրողն, անշուշտ, իրավունք ուներ այդ բանաձևի մեջ որոշ փոփոխություններ մտցնել։ Այս առումով դիպուկ դիտողության ենք հանդիպում Պաղտասար Դպրի խորհուրդներում. «Եւ երբ աստ եղեալ օրինա-

15 Նույն տեղում, էջ 228։
16 Ձեռ. № 7703, թ. 106ա—109բ։
17 Ձեռ. № 1869, թ. 278ա։

կաց ըմէկն կամիցիս, թէ գրես մէկի մի, և գացի ի մէջն մէկ, երկու բառ, որ չիցէ պատկան այն անձինն, պիտի որ չի գրես զայն, ղի որպէս և կամիս՝ կարես հաւաքել յայլ օրինակացն կամ ի քո մտացդ զպատկան այնր անձինն»[18]։

Բերենք իշխանի հասցեագրված մի գրառաջք. «Քրիստոսապսակ՝ և մեծաշուք, բարեպաշտ և բարեկրօն, բարգուաճեալ յամենայնի, անուն հռչակաւոր և իշխան փառաւոր, աստուծով մեծացեալ և տէրամբ զորացեալ, պարծանք պարծանաց և պայծառութիւն քրիստոնէից, ո՞վ ցանկալի և սիրեցեալ յաչս ամենեցունց այս անուն իշխան և թագաւորազն և ազնուական, լուսատիպ և լուսազարդ, ծաղիկ և զարդ գարնանային՝ նոր բողբոշեալ յոստոս խաչին, պտղով լցեալ աստուածային, ո՞վ ցանկալի որդեակ այս անուն»[19]։

Մեզ հայտնի գրառաջքների մեջ կան նաև չափածո ստեղծագործություններ։ Այդպիսին է, օրինակ, XIV դ. գրիչ Տերտեր Երևանցու ընդօրինակած հետևյալ նմուշը՝ ուղղված քահանային.

Հոգեհանճար եղբայր պանձալի
Եւ վաճառական գանձին գովելի,
Զորս տարեալ ունիս հոգոյդ սէնէկի
Սկեռնագոյն բանիւ հրաշալի,
Սաղմոս երգող անդադրելի
Եւ գրակարդաց հոգով ի լի,
Աշտարակ ի բարձրի
Եւ սպասաւոր յեկեղեցի,
Հրամանակատար Քրիստոսի
Եւ ձեր նմանեացն պարծանք,
Ով որ լինի[20]։

Նույն ձեռագրից ահա մի ուրիշ օրինակ՝ ուղղված «Պարոնի և ճեծելատրի».

Արմատ կենաց զարմի յազատաց,
Գովէլ գմիր ի զարդականաց,
Ահեղ յաղթող ի յամբարշտաց,
Առիւծաձև ի պարքս բազմաց,
Հսկայաձև ի մէնամարտաց
Եւ անդրդուելի հաւատ գերազանց,
Ով որ լինի[21]։

Գրառաջքներ են նախատեսվել բնակավայրերի, քաղաքների համար։ № 745 ձեռագրում նման հասցեով գրողներին խորհուրդ է տրվել իրենց խոսքն սկսել այսպես. «Այլև զհոյակապ և զհռչակաւոր քաղաքս, և զանեղաշէն և զաստուածախնամ գեղաւանս աստուծոյ տեառն և քրիստոսադաւան և զաշխատասէր ռամիկ ժողովուրդ ի սմա...» և այլն[22]։

18 Պ ա ղ տ ա ս ա ր Դ պ ի ր, նշվ. աշխ., էջ 228։
19 Ձեռ. № 1869, թ. 285ա։
20 Ձեռ. № 8030, թ. 423ա։
21 Նույն տեղում, թ. 424ա։
22 Ձեռ. № 745, թ. 150բ։

Հատուկ ուշադրության են արժանի արհեստավորների համար գրված գրառաջքները։ Ահա մի հատված «լաւ ոսկերիչի» համար նախատեսված գրառաջքներից.

... Ով պարոն ոսկերիչ խոճայ,
Եօթնարփեան շնորհօք լի,
Արուեստն քո գովելի,
Որ կա ի մէջ աշխարհի.
Դու ոսկերիչ աննման
Եւ ամենայնոց պիտանի.
Առնես գու գործ զանազան՝
Շինուած ոսկոյ `ւ արծաթի.
Շինես ըսկի պատուական,
Յոր և Քրիստոս պատարագի.
Եւ յօրինես մաղրզման,
Որ է սուրբ հացին տեղի.
Շինես գու խաչ հրաշազան,
Որ է նշան Քրիստոսի.
Կոստղես սուրբ աւետարան,
Որ է հրամանք Քրիստոսի.
Շինես գու բուրվառ արծաթի՝
Տեղ անուշահոտ խնգի...[23]։

Վաճառականությանը և շուկային վերաբերող գրառաջքներից արժեքավոր է հետևյալ նմուշը.

Պարոն ով դու խոճայ Ասար,
Քաջ Իմաստուն և խիստ ճարտար,
Սողոմոնի նմանեցար,
Խելօք առատ որպէս զԽիկար.
Զինչ որ յերկրի ստեղծուած որ կայր՝
Դու ճանաչես զլաւն և զվատթար,
Ամեն բանի ես գու սմսար,
Չկա յերկրի քեզ հաւասար.
Զինչ որ բերեն իրք մի վաճառ,
Գին կու դնես նոցա յարմար...[24]։

Պակաս ուշագրավ չէ «հաքիմի» (բժշկի) համար նախատեսված հետևյալ գրառաջքը.

Այս անուն հաքիմ աղգէս հայոց
Ընտրեալ ի բարի յարմատոց...
Քրիստոս՝ բժիշկն ամեն ցաւոց
Տացէ շնորհ ձեռացըդ քոց,

23 Ձեռ. № 6686, թ. 147բ։
24 Ձեռ. № 695, թ. 43բ։

Ում որ դնես զձեռքդ ի վերայ՝
Առողջասցի յամէն ցաւոց.
Կուրաց տացես զլոյս աչաց,
Խլից շնորհս տաս լսելոց,
Թէ ցաւ անձին և այ[լ] թէ խոց՝
Առողջասցին քոյով դեղոց...[25]։

Բացառիկ արժեք ունեն կանանց, հարսներին հասցեագրված գրառաջքները, որոնցից մեկը այսպես է դրվատում նորահարսին. «Պարծանք ծնօղի և ծնունդ և ծովածին մարգարիտ. ոսկէհատ կերտուած՝ յեռեալ ընդ տպազիոնի և ականց... Ի սոփերային ոսկոյ՝ պսակ պարծանաց և մէհևանդ հրաշայազան՝ ի պատուական քարանց կերտեցեալ, խայծեալ խնծոր ի դրախտէն ադենական՝ սիրեցելոյն ի սենեկի քոյին փեսային... գեղեցիկդ ի դրստերաց և հարս գեղեցկայ[ա]ր խէնեշացեալ ընդ սնարս փեսային, որպէս լուսին թերաբացի ի միշոյ քաւդէիցն և բազմերանգ պատմուճանաց, դուստր և քուր և հարսն հարսնարանին, զինչ անուն որ լինի»[26]։

Նման գրառաջքները հնչում են որպես կենցաղային առօրյայի կենդանի արձագանքներ՝ նոր թարմություն հաղորդելով միջնադարյան մատենագրությանը։

Կարևոր է նաև դրառաջքներն առաքողների հարցը. ովքե՞ր էին օգտվելու դրանցից։ Անվիճելի է, որ գրառաջքները նկատի ունեին և՛ պաշտոնական, և՛ մասնավոր անձանց։ Պաշտոնական կիրառություն պետք է ունենար, օրինակ, քաղաքներին ու ավաններին հասցեագրված դրառաջքը, որից անհատները չէին կարող օգտվել։ Միայն աշխարհիկ և հոգևոր տերերը կարող էին առաքել նման գրառաջքով զանազան գրություններ։ Թագավորներին, կաթողիկոսներին և այլոց հասցեագրված գրառաջքների ենթադրյալ տերերը նույնպես, հիմնականում, պետք է, որ համապատասխան անձինք ու հաստատությունները լինեին։ Այլ են մասնավոր անձանց և հասարակական լայն խավերին նկատի ունեցող գրառաջքները, որոնք զարգանում ու հարստանում են հետագայում։

Գրառաջքները իրենց ստեղծագործական առանձնահատկություններով արձակ ու չափածո փոքրածավալ ներբողներ են։ Եվ այս առանձնահատկությունն է, որ հնարավորություն է տալիս դրանք համախմբել ու քննել որպես գրական մի յուրահատուկ տեսակ կամ, եթե կարելի է ասել, ենթաժանր։

Գրառաջքներից յուրաքանչյուրի ուժը, ինչպես նաև տվյալ հեղինակի ստեղծագործական կարողությունը դրսևորվում է ամենից առաջ հաջող բնութագրականների, գեղեցիկ պատկերների, համեմատությունների և բառապաշարի դիպուկությամբ ու պատշաճությամբ։ Այդ ճանապարհով էլ, ահա, երբեմն ստեղծվել են այնպիսի գողտրիկ նմուշներ, որոնք է՛լ ավելի ավարտուն ու լիարժեք տեսք ունեն։ Նրանց հեղինակները օգտվել են միջնադարյան չափածո լավագույն ստեղծագործություններից և կերտել ուշագրավ գրառաջքբանաստեղծություններ։

Այդպիսիների թիվը նույնպես շատ է։ Այստեղ, սակայն, կբավարարվենք միայն մեկ նմուշի ընդօրինակությամբ, որը ստեղծված է Գրիգոր Նարեկացու

25 Ձեռ. № 1869, թ. 286ա—բ։
26 Ձեռ. № 6686, թ. 129ա—բ։

«Աչքն ծով ի ծով...» տաղի ազդեցությամբ, նվիրված է «Լաւ կտրիճի» և բնութագրված է «Բան աշխարհիկ և չքնաղագեղ» գնահատականներով։ Եթե Նարեկացին իր տաղում հանճարեղորեն դրվատել է աստվածամոր գեղեցկությունը, ապա այս նմուշի հեղինակը, անշուշտ, ոչ նույնպիսի ուժով, բայց ուշագրավ եղանակով փառաբանել է կտրիճ-երիտասարդի մարմնական բարեմասնությունները, թարմ շունչ տալով բանաստեղծությանը։ Ահա այդ գովք-գրառաջքը՝ ամբողջապես.

ԼԱՒ ԿՏՐԻՃԻ
ԲԱՆ ԱՇԽԱՐՀԻԿ ԵՎ ՉՔՆԱՂԱԳԵՂ

Անձն՝ աստուածազարդ, գլուխ՝ գերապանծ և ճակատ՝ լուսայպատ.
Ուներ՝ նրբաւրէն և կից կամարաց պարոյն ճեմ առեալ.
Աչաւք՝ ծով ի ծով և ծիծաղախիտ միշտ ծաւալաւրէն.
Այտիւք՝ շիկորակ շառաւեղօրէն.
Ըռընգամբ՝ ինքնաբոյս, ինքնաչափական, քանակ յարորէն.
Բերան՝ խնկարան, տուի տիրականին, մուտք մահկանացու
և ելք անմահին,
Շրթունք՝ լար կարմիր, շար բոսորաներկ, շեպիւ շրջայպատ.
Ատամունքն՝ ակատ, յակինդ անբաղդատ, իբր արծաթայպատ,
Մորուք՝ ծիածան, ոսկէթել դեղձան, մանօղանման.
Պերջ պարանոցաւ՝ լուսով պար առեալ, որպէս զառաւօտ,
Լանջք՝ լայնատարած, թիկամբ թևակիր, յառիւծ համայկալ.
Սիրտ՝ Սարարադեան, հովտաց հանգունակ, հովիտ շուշանի,
Թեք՝ պարայձգական, պարող անդրստին պարթևականաւ
Բազուկ՝ գրկայբարձ, բերմամբ ճարպկորեն, ճօճուն ճեմական,
Մատունք՝ մրտաօրէն, մատաղ մուրճացեալ, վառվառ մոմեղէն.
Անձամբ՝ ուռօրէն, սոսիական ելիւ, քեղս առեալ ծայրարձակօրէն.
Հոգոյս հարազատ և աչացս լոյս, ով և որդի (= ով լինի՞),
անդրանկան պարոն[27]։

Ամփոփելով շարադրվածը, կարող ենք ասել, որ իրոք, հայ գրականության աշխարհականացման դարերում կյանքի է կոչվել գրական մի նոր տեսակ կամ ենթաժանր՝ գրառաջք անունով։ XIII—XVIII դդ. ստեղծվել է այդ գրատեսակի մի հարուստ ժառանգություն, որը մինչև օրս ցրված է սկզբնաղբյուրներում և չի արժանացել բանասերների ուշադրությանը։

Գրառաջքների հետազոտությունը ցույց է տալիս, որ դրանք մի նոր ճանապարհ են բացում դեպի հայ միջնադարյան պատմական իրականությունը և հնարավորություն ընձեռում ծանոթանալու տարբեր բնագավառների գործիչների ու հասարակական տարբեր միջավայրերի հետ կապված խնդիրներին։ Մենք կարողացանք միայն ընդհանուր տեղեկություններ տալ դրանց մասին՝ հարցի հանգամանալից քննությունը և բնագրերի գիտա-քննական հրատարակությունը թողնելով ապագային։

---

27 Ձեռ. № 6686, թ. 128բ—129։

«ГРАРАЧКИ» В СРЕДНЕВЕКОВОЙ АРМЯНСКОЙ ЛИТЕРАТУРЕ

А. Г. ДОЛУХАНЯН

Резюме

Исследование грарачков (краткое похвальное предисловие к письмам, посланиям и т. д.) показывает, что они открывают новый путь к изучению исторической действительности армянского средневековья и позволяют ознакомиться с деятелями разных сословий. Как письменные памятники, грарачки можно отнести к художественной литературе, в частности, к жанру панегириков.

Большое значение имеет изучение грарачков в общественно-этнографическом аспекте, ибо они свидетельствуют об уровне развития культуры народа в период средневековья.